



## Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

### **ՄԱՍԻԿՈՆՅԱՆ (՝) ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ՆՈՐԱՎԿԱՅԻ (+902—903 թթ.) ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՎԱՐՔԸ\***

25. Քանի որ վերոնիշյալ Սիմեոնը իր կողմից գրավված քաղաքներում հաստատած կայազորերը որոշ ժամանակ անց իր մոտ էր կանչում և նրանց փոխարեն նորերն ուղարկում, առա Բիզոյութից կանչեց և Բուլիասին և ճրա փոխարեն որպես քաղաքի կառավարիչ մի որիշին ուղարկեց: Են կանչվող կայազորայինները, գտնելով, որ պատերազմի օրինոք տուն պետք է վերադառնալ ավարով, ասպատակում էին նոումայեցիների մնացած [շըրջաններ] և մեծ ավար վերցնելով, վերադառնում էին իրենց տեղերը: Բոլոյապ Բիզոյուն թողնելով իրեն փոխարինողին, նա էլ վերոնիշյալ օրինոք շարժվելով, դիմոց ավարառության: Հասելով Սիմեոնին, նա հանդիպում է այնուղեք բանակած հոռմեական զորքին, որին, ինչպես վերևում ասվեց, զիսավորում էր Վահանը: [Բուլիասը] իմանալով, որ այդ զորքի մեջ է և Վահանը, իր [մարդկանց] կանձնեցնելով, ինքը խաղաղաբար ստաց գնաց և նոումայեցիների ճամբարից մեկին կանչելով, խընդրեց իմանալ Վահանի մասին, ճամբարում է, թե ոչ: Իմանալով, որ նա այնուղեք է, խնդրեց տեսնել ճրան: Վահանին այդ մասին տեսյակ են պահում

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № ԺԲ-ից և 1976 թվականի № Ա-ից:

և նա, ինչպես որ էր զինված, գալիս է Բուլիասի մոտ: [Վերջինն] առանց այլապյի հարցրեց. «Դո՞ւ ես իմ արդ Վահանը, Բիզոյունի տորք Մարիամի որդին»: Նա պատասխանեց. «Ես եմ, բայց դու ո՞վ ես, ո՞րտեղից գիտու իմ և իմ մոր անունը, և ինչո՞ւ իմ նկատմամբ արդիս սիրալի ես»: Բուլիասն ասաց. «Ես մեղավոր մարդ եմ, դրա համար էլ չարժանացա տեսնել քո մոր տորք աճյունը: Ամեն անգամ, երբ այն տեսնելու համար բացում էին արդ դամբարանը, որի մեջ է նա ամփոփված, բու էր դորս գալիս և քիչ մնում, որ մեզ հրո ճարակ դարձնի, դրա համար այլև չիսամարձակվեցին բացել այն՝ ճրան նայելու: Անա դրա համար ցանկացա քեզ տեսնել, որպեսզի քո շնորհիլ արժանանամ դրան: Ինչ վերաբերում է քո անվան, և այն մասին, թե դու մենց ապատեղ ես գտնվում, ես իմացա մեր մոտ եղող ուազմագերիներից, որոնցից և լսեցի ճրաշքների մասին: Բայց ամեն ինչի մասին ավելի հանգամանորեն ես տեղեկացա այն քահանայից, որ պաշտոնավարում է քո հոր կողմից կառուցված տաճարում: Բայց այնուամենապեսիլ մեզ հետ է նման մի [ճրաշք] կատարվեց: Բիզոյունի պարապի պահպանության հսկող մեր զինվորները տարբեր հարցերի շուրջ խոսք էին անում, սկսեցին պատմել նման սրբութու ճրաշքների մա-

սին և բոլորը ապուշ էին կտրում: Նրանցից միայն մեկ հոգի՝ անհավատության ախտով վարակված, պնդում էր, թե ասվածը կեղծիք է, քանզի եթե սուրբ էր, նա մեր ձեռքից կփրկեր այս քաղաքը, որտեղ որ ինքը թաղված է: Նա դեռ խոսքը չէր վերշացրել, երբ նրան շար ոգին հափշտակեց, նա գետին ընկապ, սկսեց աչքերը շուռումուն տալ, ատամները կրծացնել, թքել, իրար նույնից ձեռքերով զիսին տալ և բարձրածայն գոչել: Նա այդպես երկար ժամանակ տանչվելով, հազիվ կանգնեց դրդողացող ուոքերի վլու և քո սուրբ մոր գերեզմանը գալով և բազում օրեր այնուեղ տառապելով, արժանացավ ապաքինման: Մենք բոլորս ականատես լինելով դրան, սարսափահար սկսեցինք բարձրածայն մեծարել իր ճշմարիտ ծառաւերին փառավորող Աստծոն, ապաքինվածին Բուլղարիա ուղարկեցինք և այնուեղ մարդկանց տեղեկացրինք նրա անձի վրա կատարվածի մասին, ապա բահանա հրավիրեցինք, որը մինչև օրս տաճարում պաշտոն է կատարում: Բոլղիան ու Վահանն անա սրանց շուրջ խոսակցելուց հետո խաղաղությամբ բաժանվեցին:

26. Փոքր անց, երբ իր թշվառական հոգին ավանդեց Սիմեոնը, իշխանությունը ժառանգեց նրա որդիի Պետրոս<sup>37</sup>, որն էլ ավելի բարբարության գործություն, իր հոր կողմից գրավված թրամիկայի բաղարձները գետին հավաքեցրեց և նրանցում գտնվող բոլղարներին իր մոտ կանչեց: Նա այդպիս փարվեց և Բիզուտիք հետ: Վահանը, իմանալով այդ մասին, իրն ներթափառ բահանանելու ու զինվորներով գալիս է Բիզուտ, իր մարդկանց հետ մտնում իր սուրբ մոր տաճարը, և սովորական աղոթքն անելուց և զոհանամ մասուցելուց հետո, նամբորում նրա արգու աճունը: Երբ սկսվեց աստվածային ու սուրբ արարողականը, դամբանում մեծ ճրադրություն էր կատարել նրան կողմէն կատարելու համարից: Բավականին ճամփուն էր արարողականը, որը բոլորին սարսափեցրեց և թիշ էր մնացել, որ նրանք թողթին ու նեռանային տաճարից: Բավականին երկար ժամանակ անց, երբ [ճրադրություն] դադարեց, սկսեցին տարակուել, ի՞նչ է արդյոք դա ճշանակում: Նրա որդիի Վահանն ասաց, «Ենչակա որ նա այն բանի համար, որ մենք լրեցինք Բիզուտնեն, զայրացած բղավում էր, այդ մասին ուազմագերին պատմեց, անա նոյն ձևով նա մեր ներկայության առթիվ երանությունից երերում է»: Սուրբ պատարագը կատարելուց հետո և տեղի ունեցածի առթիվ փառավորելով [Աստծոն], նրանք խլույն Սիլիվրիա վերադարձան:

27. Հոռմանական [կայսրության] գայխտնը իր ձեռքը վերցրեց Ռումանություն<sup>38</sup>, ու բոլղարների հետ խմանիական կապեր հաստատեց<sup>39</sup>, որով հոռմայեցինք և նրանց միջև խաղաղություն տիրեց, բոլոր բարձրվելին և առանց որևէ երլույի շտաբնեցին դեպի իրենց հայրենին ծագավ, այդ բվում Վահանը ևս, իր բարազաների մետք, Սիլիվրիայից վերադարձ Բիզուտ: Այնպիս պատասխեց, որ այն ժամանակ նրա վերսիշյալ եղբայր Ստեփանոսը Օլիմ-

պոսի լեռից ինչ-որ գործով Կոստանդնուպոլիս եկավ: Նա այլևս Ստեփանոս չէր կոչվում, այլ Սիմեոն, քանզի վանականի սրբնը հագնելով, նա իր անունը փոխեց: Անա այդ Սիմեոնը խաղաղության հաստատմամբ բերկրացած, գայիս է Բիզուտէ, ցանկանալով և հայրենիքը տեսնել, և եղբորը հանդիպել, բայց ամենից շատ եղբայրել և համբորել մոր սուրբ աճյունը և ըմբռշնել շնորհը: Հասնելով տաճարը, նա շերտուանդրությամբ աղոթեց ու գոհանա մատուցեց, հանդիպեց նաև իր եղբայր Վահանին: Նրանք համաձայնության եկան և իրենց պատկանող եղբայրական [ժառանգության] բաժնեները կտակեցին իրենց սուրբ մոր տաճարին, վերածելով այն վանքի: Սիմեոնը որոշում է պատեղ տեղափոխել [ճողոնների] աճյունները: Նա եկեղեցու դրսում գերեզման փորեղով, այնուեղ ամփոփեց հոր [աճյունը], իսկ իր սուրբ մոր [աճյունը], մարմարից պատրաստված այն շիրիմում, որտեղ նախապես հայրն էր ամփոփված: Բայց Սիմեոնը [աճյունի] տեղափոխությունը անձամբ չկատարեց, այլ որիշ մարդկանց միջոցով: Այդ մասին պատմողները դրան նետևալ բացատրությունն են տպիս: «Քամի օրինակից սարսափած, [ասել է նա], չհամարձակելիցի նայել հայրենի պղանակության: Դրա համար նա որդիշներին հանձնելու մասին վկայում էին ինչ-որ կապեր<sup>41</sup>, նա չորս տարի հոյի տակ էր, իսկ սրբություն սուրբ աճյունը, թեև քանինին տարի է, ինչ թաղված էր, ինչպես նրանք խոստվանեցին, անապական էր ու կատարյալ, նա ոչ մի պականություն չէր կրել: Այն մինչև օրս էլ այդպիսին է, ոչ մի փոփոխություն չէր կրել, թեև բազում տարիներ են անցել: Անա այդ գործը սկսուր եղածին պես գլուխ թրեցին, ինչ ընդունված է կատարեցին, որից մետք Սիմեոնը Բիզուտից թողեց-զնաց Պաֆլառների առհմաններում, Պղուխափն մոտիկ գտնվող Կոմենան կոչվող լուը<sup>42</sup>, շարունակելու իր ընտրած ճգնավորական կամքը:

28. Անա նեման բազում հրաշքներ էին կատարվում, բայց չեմ ոգում տեղի ունեցածից որևէ բան լուրջամ մատնած լինել: Մեղիսի ամրոցից դիվահար մի կիմ կապաքըների մեջ առնված, իր հարազատների կողմից սրբություն գերեզմանը բերվեց և ապարինվելով, բերկրացած տուն վերադարձավ: Դավիթ անմոնվ մի տղամարդ էլ ծանր հիվանդացավ, այն աստիճան, որ նրա մարմինն անդամայոյց էր դարձել ու անշնչացել: Նրա մարմինն անգործության էր մատնավել, նա ոչ կարողանում էր տուն, ոչ իսկական էր կոկորդը նաշողվեր մի բան բերանը տանել, մինչև կոկորդը էր նասում, Անրսի հիվանդությունը թափով դրս լինում այնուեղ, որտեղից մուտք էր գործել այն: Նր ներքին օրգանները որոնք բերելի համաձայն պետք է սնունդը մշակելին, կարգին վիճակում չէին: Այդ իսկ պատճառով նրան էլ ինը բերում

ապարհինման գանձատունը, դեպի անսպառ գանձը, թողմում դամբարանին մոտիկ, որ նա ամբողջ օրն է անցկացնում՝ ապարհուում խնդրում, խկոյն ստանում այն, բայց ոչ կատարելապես, քանի երանուին նախատեսում էր ավելի զարժանափի բան կատարել: Անշարժացած մարդը վեր է կննում, տեսնում, թե ինչպես նախկինում անզգա ուորերը ապարհնափած են և կարող են իրենց դերը կատարել, ակտում է բազել, և առանց որևէ մեկի օգնության կամ ուղեկցության, գնում իր տունը: Բայց այսուամենապես միվանդության ինչ-որ մնացորդ տանըն է իրեն: Մոռացած լինելով, թե ո՞ւ կողմից է նա բուժում ստացել, այդ ամենածանր ու անսանելի ցավերից զարդարում, մի վետու կին է կանչում, որը չար ոգիների ազրմամբ կախարդություններ էր գործում, ենթադրելով, խեղագարը, որ նրա միջոցով կատարյալ առողջություն ձեռք կրելի: Թշվանանը թշվառուն ներառելով էր կախարդությունների ու վիճուկությունների ու նաճախակի իմաստությունների, բայց ոչ թե ապարհուում էր ստանում, այլ ավելի սարսափելի փորձանքների ներառելում և, ինչպես ստու են, «իմ յանին մարդու այնորիկ չար քան զատաշին»<sup>13</sup>: Նա դարձալ ուժեղ ցավեր է ունենում, դարձալ մարմար մարմարաները անշարժանում են, [մի խորով] զիսին բյուր պատուհաններով լի փորձանք է զախի: Բայց սատանային վիճակիած չեր երկար ուրախանալ: Մարդը, հավանապես խարիսքուն, տար արցունքներով կր է անում մարդաւոր Մարիամին, իր ազգականներին խնդրում, իրեն տանեն նրա սորք տաճարը: Մահմի վրա պատկած նրան տանում են անա և զցում սորք շիրիմի սոշը: Հիվանդը, աշքը նատկող թշչին, ի խորց սրտի հանաչեց և ալյուրով նեկնապով ու շնչակուոր ասաց. «Եու, երանուիդ, իմ թշվառականի գքություն ցուցաբերողը, իմ դեպի մաս տանող հիվանդությունը ազատող, մենք սառ արժանից չփոխինատուցեցինք քեզ: Հիվանդության փոքր մնացորդի [բուժումը] մենք քեզ, չերմուանդ թշչիդ շվառամեցինք, այդ բազմատեսակ հիվանդությունը մեկից բռնուիդ, այլ սատանայի չար խորիտով հիմարաբար ու խայտառակ կերպով վատանեցինք կործանաբար ու մենագ մի կնոջ: Բայց քեզ նատուկ մարդափրառամբ փրկի՛ր իմ կրկնակի փորձանից: Եթե ես մարմարական առողջություն ձեռք բերեմ, պիտի նավատառած լինեմ, որ արժանանալու և նաև քալության այն մեղքերի, որոնք թշվառաբար գործեցի և որոնք արժանի չեն քալության, քանի լավությանը] դիմաց ամբարտություն նանդես բերեցիք: Անա այս ու այլ ողորմելի խոսքերի վրա երանուին, մարդասեր [Քիսատուի] աշակերտութին, նաև, ով Ա կենդանությանը, Ա մահվանից նետու առատորներ իր գթությունն էր նելում, տեղի տիեզ և կատարյալ բուժում շնորհեց մարդուն:

29. Մի որիշ կին է, որ դիմանար էր եղել ու տառապում էր, բերվելով պրոբու զերեմանի մոտ, ապարհնելից: Այդ կնոջ դատեր դիմանար ա-

մուինն է նոյն ձևով առողջացավ: Մի ուն քանազի, որ ինչ-որ հիվանդությունից պատահվել էր ու անզգապատել, երանուին խուելու և զգալու հնարավորություն տվեց: Մի երեխա է, այն աւիճան թմրած, որ անզամ բերանը չեր կարողանում բացել, [երանուին] գերեզմանի մոտ բերվելով, առողջություն ստացավ: Մի որիշ տղանար, անունը նասանակ, որ սատանայի ազրմամբ խեցը կորցրել էր և դաշտերու ձիու նման ուորերն էր գետներին խփում, լուսների խորխարաններով, դժվարանցաների ճամփաներով գնում բոլոր կապակենները պոկած, նարազաների կողմից հաջիվ բերվում է և կապակենների մեջ առնելով, տարվում պրոբու գերեզմանի մոտ և այնուն կատարելապատ առողջանում: Նրա մետ մի դիմանար բերվեց և նա է լիակատար առողջացավ և նարազաների մետ բերկացած իր տունը վերաբարձավ:

30. Երանուին գործած հրաշքների մեծ մասը ես զանց եմ ստում, քանզի երկար պետք է պատմեմ: Բայց որովհետև ունենարել սիրողները կնեղանան, մեծ ցանկություն ունենալով իմանալով սըրունու որդիների մասին, թե ինչպես նրանք կենացանալու պատառքներին և ինչ վախճան ունեցան, ապա մի քանի խոր է երանց մասին կամախ: Վահանը իր նոր կենդանությանը հստանանալով և տղանարդ դառնալով, ամուսնացավ մի նպանի կնոջ մետ, և ստանալով դրանգարիսի աստիճանը, պատասին այնունիվ շաբաթնեցավ այս աշխարհի բարիքների վրա, այլ ամեն ինչում իր մորը հմանելով, մեզ էր ու խոնարի, բարենամրույր, մողմարար, օգտակար, ուազմական սփրանքներում բոլորին զերազանցոյ: Նա արի էր մարմանով, բայց ավելի արի նորով ու կենցաղավարությամբ: Նա արծաթաւոր չէր, ոչ է շամանով, առ միշտ իր գինավարակիցներին էր թողուն ավարը, որի պատճառով միրելի. Էր նրանց ու նրանց շշանում մեծ նամրավ էր վայելում և իր անունը բոլորի շրջներում էր: Նա իր բոլոր լավագույն սփրանքներում հաղորդակից ու գործակից ունենած թողունուսի, ով նորը փոխարինեց սորունության պաշտոնում, ուազմական գործերում մի քաշ ու կորիճ, աստվածապաշտության հարցերում էլ ավելի արի մի մարդու, որին ընկերակցելով, բարեցել ու զորեղ եղան նման բարերեր նորն էին երեկու ու որպես զերազանց երկրագործներ առաջնության սկրմեր սերմանում, իսկ նրա ժամանակն եկամ, գործունակությամբ հնձնեցին, նաստ պատուի նվիրեցին: Աստծոն և աստվածային ամբարենքը զետեղեցին, հավիտենական բերկրանը ստանալով: Վահանը բոլոր առաջնություններից ավելի ողորմածությունն էր գնահատում նմանելով մոր և նետելով նրա չերմուանդության: Նա, պրոբունց այդ լավագույն սփրանքը, չէր ամուսնում նաև սորք պատճառուն, և ամեն օր, տասներկու ժամ տևող պատճառություններից ավելի ողորմածությունն էր գնահատում էր մեր Աստծո միշտ

կրպ մոր, դրա համար այլևս գրքի շիփմելով։ Նա ոչ մի ժամանակ բաց չէր բողոք և ոչ մի արարողություն։

31. Այն պատճեռով, որ նրան և կանչում էին երկնային մենաստանները, Տերը հրամայեց, որ դա իր բնական ընթացքով կատարվի։ Նա հիվանդանում է որդվանային հիվանդությամբ և բուժվելու համար գալիս Կոտուանդնուպոլիս։ Նրա [Կոտուանդնուպոլիս գնալը] Աստծո նախախնամությամբ ու կամքված տեղի ունեցավ, քանզի հենց այն օրը, երբ Վահանը հիվանդ Կոտուանդնուպոլիս ժամանեց, ժամանեց նաև նրա եղբար Սիմեոնը՝ Կուտմինա լեռից, որտեղ որ գտնվում էր առաքինության նրա գործառունը, այդ մասին վերևում ասվեց։ Նրանք, անսպասելիորեն հանդիպեցին միմյանց այն տան դրան մոտ, որտեղ որ պետք է օթևաներ Վահանը։ Դրան ականատես եղողները և այդ մասին այժմ լսողները այդ բանն աստվածային են համարում։ Անս այդտեղ ողջագործվելով և ինչ որ անհրաժեշտ է ասելով, Օրանք Աստծուն գործանամ հայտնեցին։ Իր եղբոր՝ Սիմեոնի ձեռքով Վահանը արծանանում է աստվածային ու հրեշտակային սրբամի՞՛ ստանում Մարինոս անոնք և հունիս ամսի երկուսին փոխադրվում աստվածային մենաստանը։ Նրա արգու և պատվական աճրոնը ամփոփվում է Կորոնեի կրչված Աստվածածնի վանքում։ Ասպարի ջրամբարի մոտ<sup>44</sup>։ Նրա վախճանն անս այսպիսին էր։ Թէ նիշյալ Սիմեոնին, կենեղով այն բոլորից, ինչ սավեց նրա մասին, կարևի՞ է դասել սրբերի շարքը, թող ասեն սրբազն մարդիկ։ Նա զարգացած մարդ էր, կամքրալան արքունիքում ապրած, ինչպես ասվեց, և նա հաջողություն կունենար աշխարհական կյանքում, սակայն նա դեպի Աստված մեր տածելով, ինչպես Ավետարանն է ասում, «մաս քարի ընտրեաց»<sup>45</sup> կամովին հրաժարվեց աշխարհիկ պատիվաներից, որուեց լոկ Աստծո համար ապրել՝ իրեն հանձննեց ճգնավորական տառապանքներին։ Նա լնից լու էր անցնում, վարդից վայր, մեղլի ճման կարծես ծաղիկներից առաքինություններից լավագույններն էր հավաքում, նա իրեն իւկական քաղցրության պահն դարձեց և աշխարհի ամեն մի դառնությունից մարզվելով, Աստծո սուս դարձավ։ Նա հակառակ իր ցանձնության հարցստացրեց նաև քանակայության աստիճանը, այդ քայլին դիմելով միայն ու միայն վերակացուին ենթարկվելու համար։

32. Այդպես էլ պիտի լիներ, այդպիսի [մորից] արդիսի 〔զավակներ〕 պիտի ծնվեին, սրբազնից՝ սրբազն, հրաշալոց՝ հրաշալի, օգտակարից՝ օգտակար, սրբից՝ սուրբ, որոնք ծնված օրից, ավելի նիշու՝ ծնվելուց էլ առաջ Աստծուն էին նվիրված, քանզի նրանց աշխարհի բերողը դեռ մասնուկ հասակից կամովին իրեն Աստծուն նվիրեց, դատնալով ընալպատ բոլոր առաքինությունների, որոնցով նրանում է Աստվածն ամենցուն։ Ո՞վ կարող է պատմել նրա ազնվագության մասին, գլուխեցիկ հետ-

ինայ նրա տածած սիրավիրության, բարության, ազնվագության մասին, նեզահամբուրության, գթասրտության, բոլորի և ամեն ինչի համենայ նրա ունեցած բարենամբուրության ու մեղմության մասին, բոլոր կարուղավների նկատմամբ օգտակար ու մարդասեր լինելու, նրա անշափի ողորմածության, որ նա ցուցաբերում էր, իրեն կատարելապես մոռանալով։ Նա ամեն ինչ աղքատներին էր տալիս։ Քանի՞քանիների դուստրերին նա ամուսնացրեց՝ ինքը տաղով նրանց օժիտը, քանի՞քանի չքավոր որբացած երիտասարդների ուորի կանգնեցրեց, քանի՞քանի այրիացած կանայք արժանացան նրա բարենամբուրույթ միսիթապության, քանի՞քանի սովոր յաջմաների նա կերակրեց, մերկերի հագլեցրեց, ծարավալների ծարավը հագլեցրեց՝ ամենաբացզրահան ըմպելիքով։ Աղքատները ավելի շուտ նրան էին շնչում, քան օրը, տառապաները, ցրտից ու տառնամանիքից սաշողները նրա հանդերձներով խնամկեցին, նրանք, ովքեր ջոի անգամ չին կարդանում գնալը՝ մարմնի թուլության պատճեռով, նրան ունեցան անհրաժեշտ ամեն ինչի հավերժ մատակարար։ Հենց նրան են վայել Հորի խոսքերը, թե «զի դուռն իմ բաց է ամենայն եկեղեց»<sup>46</sup>։ Էլ ո՞վ կարող է պատմել նրա՝ սուրբ տաճարները նամակնեղու մասին, նրանց բարեկարգման համար նրա ցուցաբերած հոգատարության ու մտահոգության, գիշերային հովումների ու անթիվ ծնրադրությունների մասին, նրանց ընթացքում գետի հման հոտող քրտինքների, նրա աշքերից անմիջապես ու անդադրությունների մասին։ Ո՞վ չի ապչի ոչ զարմանա նաև փորձությունների ժամանակ նրա ցուցաբերած համբերատարության, զրպարությունների ու բանարկությունների ժամանակ նրա ամենակայուն հոգուց թուղ արիության, դըմբախտությունների ու փորձանքների ժամանակ ցուցաբերած անսամբ ու անկեղծ համբերատարության վրա։ Այդ բոլորից բացի ո՞վ կարող է թվարկել նրա՝ իր մահից հետո բոլորին ի տես և բոլորի համար գործած բարեգործությունների՝ բուժումների ու հրաշագործությունների մասին, որոնք անմիջապես տեղի էին ունենում ու շնորհվում կարիքավորներին, հաստատում հավատքով դեպի նրա սուրբ գերեզմանը շատապողներին։ Ինչպես՞ն նա կարող էր օգտակար չինել իր մահից հետո, երբ նա գործելու ավելի շատ մեծ հնարավորություն ստացավ, երբ թողնելով մարմնը, մաքոր հոգով ամփական կապ հաստատեց Աստծո մետ, արծանաւու լինել ի ինրին Աստծո զավակների շարքու։ 33. Ո՞վ արգու Մարիամ, աշխարհի բոլոր ազնիվ կանաց զարդը, սրբերի ու արդարների ամենաբացզրահան բանույթը, ամանը առաքինությանց, անոյթ շնորհների, բուժման անսպառ գանձը, աստվածային ամենասուրբ հոգու պարզելների շնեմարանը, ով [քո] պատվական զավակների խմբով ներկայացնել եւ երանելի ու ամենասուրբ Երրորդության և բացէ ի բաց աղաղակում ես։ «Անաւասիկ և մանկունք իմ, զոր ես ինձ Տէր»<sup>47</sup> գթացո՞ղ դարձրու

մեզ անարժաններին համար, ճերող, կրկացնախտ և անհիշաչար Տիրոջ, որպես միջնորդ ու օգնական առնելով նաև քայլ սրբոց, ժողովը համատակների, գնդերն արդարների, խմբերը հրեշտակների, շուկերն առաջաների, ժողովը մարգարների և գունոր հայրերի, քանզի, ես լավ գիտեմ, բոլոր նրանք կմիջնորդն մեզ համար, որովհետո մարդասեր են և մարդասիրի ճշմարիտ աշակերտներն եղան: Բայց ամենից առաջ դու ունեն մեր [մարդկացին] ցոյլի ինքնարուի կոչը՝ բոլորի տիրապետն Աստվածնեն, մեր տիրոջ Հիսոսի Քրիստոսի հավերժ կոչս մոր, որ միշտ ընդառաջում է մեզ և երրեք չի հրաժարվի մեր միջնորդը լինել: Ահա, եթե բոլորի կողմից պայսես աղաջները բարեւեր Աստծոն, ով իր մարդասիրությամբ ու բարությամբ միշտ հաջորդում է մեր բազում անօրինությունները, հնարավոր է, որ նա ընդառաջի, տեղի տա և բարությամբ հայի մեր վրա, վերացնի մեր հանդեպ ունեցած իր բարկությունն ու զարդույթը: Նա մեր հանդեպ գոացող կիմի լոկ իր անձանելի բարությամբ ու մարդասիրությամբ և մենք կփրկվենք մեզ տանջող ցավերից ու անտանելի փորձություններից, ականատես կլիմենք մեր ամենասիրիս թշնամիների գլխովին ոշնչացման, [թշնամիների], որոնք վայրի գաղանեներ նման խուժում են մեր վրա և հողություն հուրոյ Քրիստոսի, վիճակն ընտրյալ, որին իր սեփական արյամբ գենց անեծքից: Այս, արգո մայր Մարիամ, հրաշքը ներկա սերնի, մի դարարի մեզ՝ Քրիստոսի համար երկարատու խաղաղություն ու Աստծո բարիքները պատառելոց, իսկ Աստծո կողմից երկրի վրա բացավորելոյն իրավունք տառապներին՝ մեծ հայտանակ ընդուն բոլոր ընդիմակից թշնամիների, և Քրիստոսի եկեղեցու աճ, կորով ու ամուր միասնություն: Խոկ դու [Մարիամ] պահապանը եղիր Բիզուեի, ամենասեղեցիկ սպա քաղաքի, որտեղ Աստված մրցանացը քո սուրբ ու պրականացոյն մարմինը՝ բնակիչների հասարակաց օգնության, բովասարության, ամեն տեսակի հիվանդություններից ու անհայտ թշնամիներից նեռու պահելոյն համար: Խոկ եափսկուպոսին ու ողջ կողմին, և քեզ ամեն տարի պատվողներին փրկի՞ր, հրանց նեռու պահի ամեն տեսակի հիվանդություններից: Ի փառ Հոր, Որդի և սուրբ Հոգվո, ամենասուրբ և ամենութ երրորդության՝ մենք աստվածության ու թագավորության, ում վայել է փառք, զրությունը, պատիվ ու երկրպագությունը համլիտյան համլիտներից, ամեն:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

<sup>1</sup> Հիմ Հումաստանում աթլորես էր կոչվում մարմնամարզական խաղերում մրցանակներ շնորհողն ու այդ խաղերը դաստողը:

<sup>2</sup> Ազունութեանը նոյնանում է աթլորեսին: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

<sup>3</sup> Վասիլ Բ (976—1025 թթ.), բյուզանդական կայսր:

<sup>4</sup> Վասիլ Ա (867—886 թթ.): բյուզանդական կայսր, Սակերունական (Հայկական) նարատության իմբնադիր:

<sup>5</sup> Միքայել Գ (842—867 թթ.): Թեոփիլոսի և հայացգի կայսրունի Թեոդորայի որդին, որ սպանվեց Վասիլի կողմից:

<sup>6</sup> Պատկերամարտության իմբնադիրն էր Լևոն Գ Դավիթացին (717—740 թթ.): Այդ շարժումը հարատևեց մինչև Թեոփիլոս կայսեր մահը (20 հունվար 842 թ.): Նրա գամին տիրապած կինը՝ Թեոդորան, որ անշափանաւ որդու՝ Միքայել Գ-ի հինամակալն էր, մեկ ամիս անց (19 փետրվար 842 թ.) Վերականգնեց սրբապատկերների պաշտամունքը և վերջ տվեց պատկերամարտության: Այդ օրը բյուզանդական եկեղեցին կոչվեց «Ուղափառության կիրավի», որը տուշվում է մինչև օրս, իսկ Թեոդորային դասեց սրբերի շարքը, սունդուկը նրա հիշատակը փետրվարի 11-ին:

<sup>7</sup> Թեոփիլոս (829—842 թթ.): Ամորիական կոչված հարատության պատկերամարտ կայսր:

<sup>8</sup> Մահրաման տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և Բայկերի մասին Յ, Բյուզանդական աղբյուրներ, Գիլր Բ, Կոստանդին Միքանամիթի: Մարգմանությունը բնագրից, առաջարան և ծանրագրություններ Հրաշ Բարթիկանի, Երևան, 1970, էջ 59:

<sup>9</sup> Հումարնում պրոսատիոն, հայկական միջնադարյան աղբյուրներում հանդիպում է պրաստ, պատասին և պրաստոնց ձևով: Հիմ հումարներում Եշանակիլ է բաղաքի արլարձան: Միջնադարում Եշանակիլու էր կալված, որտեղ, որպաս կանոն, բնակիվում էին ոչ թե ճրա տերերը, այլ ճրա ենթակա մարդիկ՝ ստորկներ, վարձակալութեր և ազն: Պրաստիոնն հաճախ ունենում էր հրակական չափեր: Տես Կոստանդին Միքանամիթին, էջ 220—221:

<sup>10</sup> Բյուզանդիակում կային բանդուների, հավատորմիդի, վիզավի դրուգարներ: Բանակաթեմը (զորաբանակի իմաստով) ստորապամանյում էր բանդուների (գունդ, վաշո), որոնք իրենց հերթին կազմում էին բարձր-եներ և ծրծցշուներ, որոնց գլխավորում էին մերարևներն ու դրուգարները: Մահրաման տե՛ս Կոստանդին Միքանամիթին, էջ 288:

<sup>11</sup> Սաղմոս իւ 8:

<sup>12</sup> Ցով Ա 21:

<sup>13</sup> Բիզուն (Բւշն), վարքի գրության ժամանակ արտասանվում էր Վիզիի: Քաղաք Թրակիայում, այժմ Վիզեն Թուրքիայի կազմում: Գտնվում էր Կոստանդիության կողմանության կազմում: Վարքը կոչված է նաև թագավոր (Յասուլենց), Տե՛ս § 28:

<sup>14</sup> Լևոն Զ (866—912 թթ.): Ալեքսանդրը նոյն ժամանակաշրջանում կայսերակից էր:

<sup>15</sup> Բոլղարների ցար Սիմոնը (893—927 թթ.): Վարքում կոչված է նաև թագավոր (Յասուլենց), Տե՛ս § 28:

- <sup>15</sup> Հավանաբար խոսք 894—896 թթ. բյուզանդական պատերազմների մասին է:
- <sup>16</sup> Բյուզանդիայում երեք բարձր կամ ծրագրություն կազմում էր մեկ տուրմա կամ մերոս (մէրօս), որը զվարդում էր մերարից կամ տուրմարից: Ըստ Կոստանդին Շիրամածինի տուրմարից իր հրամանների տակ մեջ 500 հետաձիգ, 300 վահանակիր և 100 հիգակալիր: Տուրմարից բանակաթեմի զորավարից հետո ամենաբարձրաստիճան ամենավորությունն էր համագում: Տե՛ս Կոստանդին Շիրամածին, էջ 233:
- <sup>17</sup> Մատթեոս ԺԲ 10:
- <sup>18</sup> Հմտ. Ա. Տիմոթեոս Բ 9:
- <sup>19</sup> Ականարկում է բանարկումն, սատանային:
- <sup>20</sup> Ծննդ. ԼԹ 18—20:
- <sup>21</sup> Առ Եփեսացիս Ե 28:
- <sup>22</sup> Հմտ. Առ Հոռվմանեցիս ԺԲ 18:
- <sup>23</sup> Սաղմոս ԿԹ 2:
- <sup>24</sup> Գործ Առաքելոց Թ 15:
- <sup>25</sup> Եկոնոմ Զշանակում է տնտես:
- <sup>26</sup> Տե՛ս ծանոթ. 17:
- <sup>27</sup> Կարարիզուն հիշված է Բիզունի հետ միասին Կոստանդնուպոլիսի պատրիարքին և նմակա արքային պատուապուտյունների ցուցակում, որտեղ Բիզուն առաջին համարի տակ է, իսկ Կարարիզուն՝ բանայութերորդ: Տե՛ս H. Gelzer, Georgii Cyprii, Descriptio Orbis Romanorum, Lipsiae, 1890, ք. 60.
- <sup>28</sup> Թուրքերեն Լուկ Բուրգազ: Քաղաք Արևելյան Թրակիայում: Այժմ գտնվում է Թուրքիայի կազմում, Աղրիանապոլիսի հարավ-արևմեր:
- <sup>29</sup> Այս զրոյցը նման է Ազգաթանգեղոսի «Պատմության» մեջ (§ 767) Հոլիխմյանց կուսերի համար կառուցվող դամբարանների համար Տրդատի՝ Մասիս լինից թերած քարե տախտակների մասին զրոյցին: Այդ դամբարանների կառուցման ժամանակ Տրդատի մարմնի վրայից աստիճանաբար թափվում էին խոզի մազերն ու կըճակալերը, ազնակն, ինչպես աստիճանաբար բացվում էին կուրացած նիկեֆորի աչքերը՝ իր կնոջ դամբարանը կառուցել տախիս: Հմտ. նաև «Ազգաթանգեղոսի պատմության նորմական խմբագրությունը (Վարք)»: Թարգմանությունը բնագրից Հ. Բարթիկյանի, առաջարան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնյանի, «Եշմիածին», Ը, 1966, էջ 50: Նաև Է, 1973, էջ 37:
- <sup>30</sup> Սովոր Ռողոսոս, թուրքերեն Թերքիրդալ, Թրակիայում, Մարմարայի ափին:
- <sup>31</sup> Մատթեոս ԺԲ 45:
- <sup>32</sup> Մատթեոս ԺԲ 45:
- <sup>33</sup> Մատթիաս գտնվում էր Բիզունից արևմեր, Առ ծովի ափին, այժմ Միջին Թուրքիայի սահմաններում:
- <sup>34</sup> Բիզունն ըստ Բաղասէի գրավվեց 925 թ., ըստ Վ. Զլատարովու՝ 922 թ.:
- <sup>35</sup> Բուլիասը տիտղո՞ս է, թե հասուկ անոն, դժվար է ասել: Բաղասէլը գտնվում է, թե հասուկ անոն է, իսկ Զլատարակին ու Մորավչիկը՝ համարում են պրոտուղարական Յուլչէ կամ Յուլչէ (բոյար) տիտղոս:
- <sup>36</sup> Միջիվրիա, քաղաք Արևելյան Թրակիայում, Մարմարայի ափին, այժմ Թուրքիայի կազմում, Կոստանդնուպոլիսից մոտ 90 կմ. արևմուտք:
- <sup>37</sup> Նկատի ունի ոչ թե Թեսալիայի Զշանավոր լոռոց, այլ արևմտյան Փոքր Ասիայի, ծամանակալից Բրուսա քաղաքի մոտ գտնվող լոռոց, այժմ կոչվում է Քեշշղրաղ:
- <sup>38</sup> Բուլղարների ցար Պետրոս (927—969):
- <sup>39</sup> Ռոմանոս Ա. Լեկապենոս (920—944 թթ.):
- <sup>40</sup> Ցար Պետրոս ամուսնացած Ռոմանոս Լեկապենոսի թոռ Մարիայի մեռ, Ռոմանոսի որդի Քրիստափորի դատեր: Հաշտության պայմանագրի (Խոկումքեր 927 թ.) պատվիճ Մարիան Ալեքանվանվեց Իրինա (Խունարեն Զշանակում է խաղաղություն):
- <sup>41</sup> Բնագրում շքաշունակ: Դժվարանում եմ ասել ինչ նկատի ունի:
- <sup>42</sup> Վարքում լոռոց տեղադրյում է Պափլագոնիայի սահմաններում: Կամ ոսումնասիրողներ, որոնք այն Բյութանիսկում են տեղադրում:
- <sup>43</sup> Մատթեոս ԺԲ 45:
- <sup>44</sup> Ասպարի շրամբարի տեղադրությունը վիճելի է: Ենթադրում են, որ գտնվում էր սովոր Սևիլի մզկիթի մոտ:
- <sup>45</sup> Ղուկաս Ժ 42:
- <sup>46</sup> Ցովք ԺԱ 32:
- <sup>47</sup> Առ Եբրայեցիս Բ 18:

